

ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ԳՈՐԾՆԹԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2021-2022 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻ



ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ԳՈՐԾՆԹԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՊՐՈՌԵԿՏՈՐ-ՏՆՕՐԵՆԻ ՊԿ՝
ՆԱԶԵԼԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ ----- էջ 5

1. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ----- էջ 6

1.1. 2021-2022 ՈՒՍՏԱՐՎԱ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՆ ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՍԲԻՈՆՆԵՐԻ, ԿՐԹԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԻ ԵՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՁԵՎԵՐԻ ----- էջ 6

1.2. ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ----- էջ 10

1.3. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ ՄԻՏՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ----- էջ 13

2. ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄ----- էջ 40

2.1. «ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԲԱԿԱԼԱՎՐԻ ՈՒ ԱՆԸՆԴՀԱՏ ԵՎ ԻՆՏԵԳՐԱՑՎԱԾ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ (ԱՌԿԱ, ՀԵՌԱԿԱ) 2022-2023 ՈՒՍՏԱՐՎԱ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ ----- էջ 41

2.2. ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԹՎԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՇՊՀ ԸՆԴՈՒՆՎԱԾՆԵՐԻ ԵՎ ՇՊՀ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԹՎԵՐԻ ՀԵՏ ----- էջ 44

2.3. ԴԻՄՈՐԴՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԹԻՎԸ (ԲԱԿԱԼԱՎՐԻԱՏ (ԱՌԿԱ, ՀԵՌԱԿԱ), ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱ)՝ ԸՍՏ ՖԱԿՈՒԼՏԵՏՆԵՐԻ ----- էջ 49

2.4. ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ԸՍՏ ԱՆՎՃԱՐ ԵՎ ՎՃԱՐՈՎԻ ՏԵՂԵՐԻ ----- էջ 54

2.5. ՄՐՅՈՒԹԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆ ԸՍՏ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ (ԴԻՄՈՐԴՆԵՐԻ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾՆԵՐԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ) ----- էջ 58

2.6. ՎՃԱՐՈՎԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՇՎԵԿՇԻՌՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԾԱՎԱԼՈՒՄ (ԸՍՏ ԿՐԹԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԻ) ----- էջ 62

2.7. ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐՆ ԸՍՏ ԿՐԹԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԻ ----- էջ 63

2.8. ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱԿԱԶՄԸ ԵՎ ՀԱՇՎԵԿՇԻՌԸ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄՈՒՄ ----- էջ 64

2.9. ԲԱԿԱԼԱՎՐԻ ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԱՄԱԿԱԶՄԸ ԵՎ ՀԱՇՎԵԿՇԻՌԸ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄՈՒՄ ----- էջ 66

2.10. ԲԱԿԱԼԱՎՐԻ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԱՄԱԿԱԶՄԸ ԵՎ ՀԱՇՎԵԿՇԻՌԸ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄՈՒՄ ----- էջ 67

2.11. ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄԸ ԵՎ ՀԱՇՎԵԿՇԻՌԸ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄՈՒՄ----- էջ 68

3. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄ----- էջ 70

3.1. ՀԻՄՆԱԿԱՆ ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԲԱՇԽՈՒՄՆ ԸՍՏ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ, ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԻ, ԿՈՉՈՒՄՆԵՐԻ--- էջ 70

3.2. ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԲԱՇԽՈՒՄՆ ԸՍՏ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՁԵՎԵՐԻ----- էջ 72

3.3. ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ՄԻՋԻՆ ՏԱՐԵԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԲԵՌՆՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ----- էջ 73

3.4. ԻԳԱԿԱՆ ՍԵՌԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ՀԱՇՎԵԿՇԻՌԸ----- էջ 75

3.5. ՈւՍԱՆՈՂ/ԴԱՍԱԽՈՍ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆ----- էջ 78

3.6. ՈՒՍԱՆՈՂ/ՈՒՍՈՒՄՆԱԾԺԱՆԴԱԿ ԿԱԶՄ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆ ----- էջ 79

4. ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ----- էջ 80

ՆԱԽԱԲԱՆ

Բարձրագույն կրթության զարգացումն իր պահանջները, առաջնահերթությունները և մարտահրավերներն է թելադրում ուսումնական հաստատություններին: Բուհերի համար կարևոր է պատշաճ արագությամբ, որակով, ճկունություն դրսևորելով արձագանքելու դրանց, որպես կազմակերպություն պատրաստ լինելու նոր հմտությունների ձեռք բերմանը՝ առաջնորդվելով ուսանողի՝ որպես պատվիրատուի կրթության, առողջության և այլ կարիքների կարևորությամբ: Այս համատեքստում «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամը հիմնավորված շտկումներ, ճշգրտումներ է արել և՛ կրթական ծրագրերի բովանդակության, և՛ ուսումնական գործընթացի կազմակերպման պլանում:

Հաշվետու 2021-2022 ուստարվա ընթացքում ՇՊՀ-ի ստորաբաժանումներն իրականացրել են իրենց գործառույթները փոփոխված կրթական միջավայրում, որի նկատմամբ առավել քան զգայուն է եղել ՇՊՀ-ի ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնը (այսուհետ՝ ՈՒԳԿԿ/Կենտրոն)՝ պայմանավորված իր գործառութային առանձնահատկություններով: Կենտրոնը, ինչպես և նախորդ տարիներին, հետևել է իր հիմնական նպատակին՝ ուսումնական գործընթացի որակյալ կազմակերպմանը և կառավարմանը, կատարել է իր գործառույթները և զարգացրել կարողությունները: Համակարգված աշխատանքի շնորհիվ Կենտրոնը մասնագիտական կրթության իրականացման համակարգում, որպես ուղենիշ ունենալով համալսարանի զարգացման հիմնական ուղղությունները, բակալավրիատում (առկա/հեռակա) և մագիստրատուրայում ուսումնական գործընթացի պլանավորումը, կազմակերպումը և վերահսկումը իրականացրել է պատշաճ մակարդակով:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

Հաշվետու ժամանակահատվածում համալսարանի չորս ֆակուլտետները՝ բնագիտամաթեմատիկական, հումանիտար գիտությունների և արվեստի, սոցիալական գիտությունների և իրավունքի, մանկավարժության և ռազմական ամբիոնը, իրականացրել են բակալավրի առկա 29, հեռակա 24, մագիստրոսի 23 կրթական ծրագրեր, որոնց թողարկման պատասխանատվությունը կրում են մասնագիտական 14 ամբիոնները:

2021-2022 ՈՒՍՏԱՐՎԱ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՆ ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՄԲԻՈՆՆԵՐԻ, ԿՐԹԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԻ ԵՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՁԵՎԵՐԻ ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

Դասիչ	Մասնագիտություն	Ուսուցման համակարգ	
		Առկա ուսուցման համակարգ	Հեռակա ուսուցման համակարգ
Մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոն			
011401.05.6	Մաթեմատիկա	✓	
061101.02.6	Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա	✓	
011401.06.6	Ինֆորմատիկա /տեղեկաբանություն/		✓
061105.01.6	Տեղեկատվական տեխնոլոգիաներ	✓	✓
Գործարարության և վարչարարության ամբիոն			
041301.01.6	Կառավարում	✓	✓
041401.01.6	Շուկայագիտություն	✓	
041101.01.6	Հաշվապահական հաշվառում և հարկում	✓	✓
Աշխարհագրության, կենսաբանության և քիմիայի ամբիոն			
011401.03.6	Աշխարհագրություն	✓	✓
011401.01.6	Կենսաբանություն	✓	✓

053101.02.6	Դեղագործական քիմիա	✓	✓
054201.02.6	Քարտեզագրություն և կադաստրային գործ	✓	✓
Հայոց լեզվի և գրականության ամբիոն			
011401.19.6	Հայոց լեզու և գրականություն	✓	✓
032101.01.6	Լրագրություն	✓	✓
Անգլերեն լեզվի և գրականության ամբիոն			
011401.21.6	Անգլերեն լեզու և գրականություն	✓	✓
023201.01.6	Թարգմանչական գործ՝ անգլերեն և ռուսերեն	✓	
023201.01.6	Թարգմանչական գործ՝ անգլերեն և հայերեն	✓	
Ռուսաց լեզվի և գրականության ամբիոն			
011401.20.6	Ռուսաց լեզու և գրականություն	✓	✓
Միջմշակութային հաղորդակցության և զբոսաշրջության ամբիոն			
	Զբոսաշրջություն	✓	
023201.02.6	Միջմշակութային հաղորդակցություն՝ ֆրանսերեն և հայերեն	✓	
101801.01.6	Սերվիս	✓	✓
Արվեստի ամբիոն			
021401.01.6	Դեկորատիվ կիրառական արվեստ	✓	
011401.11.6	Կերպարվեստ		✓
021201.04.6	Համակարգչային գրաֆիկա	✓	
Պատմության և փիլիսոփայության ամբիոն			
011401.18.6	Պատմություն	✓	✓
Իրավագիտության և քաղաքագիտության ամբիոն			
042101.01.6	Իրավագիտություն		✓
031201.01.6	Քաղաքագիտություն	✓	
Հոգեբանության, սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի ամբիոն			
031301.01.6	Հոգեբանություն	✓	✓
092301.01.6	Սոցիալական աշխատանք	✓	✓

031401.01.6	Սոցիոլոգիա	✓	✓
Մանկավարժության ամբիոն			
011301.01.6	Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	✓	✓
011201.01.6	Նախադպրոցական մանկավարժ. և մեթոդիկա		✓
011301.03.6	Սոցիալական մանկավարժություն		✓
Ֆիզիկական դաստիարակության տեսության և մեթոդիկայի ամբիոն			
011401.09. 6	Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ	✓	✓
Ռազմական ամբիոն			
011401.16.6	Նախնական զինվորական պատրաստություն	✓	✓

ՄԱԳԻՍՏՐԱՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

Դասիչ	Մասնագիտություն
Մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոն	
011401.05.7	Մաթեմատիկա
011401.04.7	Ֆիզիկա
061101.02.7	Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա
Գործարարության և վարչարարության ամբիոն	
041301.01.7	Կառավարում
Աշխարհագրության, կենսաբանության և քիմիայի ամբիոն	
011401.01.7	Կենսաբանություն
072101.08.7	Կենսատեխնոլոգիա
011401.03.7	Աշխարհագրություն
Հայոց լեզվի և գրականության ամբիոն	
011401.19.7	Հայոց լեզու և գրականություն
Անգլերեն լեզվի և գրականության ամբիոն	

011401.21.7	Անգլերեն լեզու և գրականություն
Ռուսաց լեզվի և գրականության ամբիոն	
011401.20.7	Ռուսաց լեզու և գրականություն
Արվեստի ամբիոն	
021401.01.7	Դեկորատիվ կիրառական արվեստ
Միջմշակութային հաղորդակցության և զբոսաշրջության ամբիոն	
101501.02.7	Կայուն զբոսաշրջություն
Պատմության և փիլիսոփայության ամբիոն	
011401.18.7	Պատմություն
Իրավագիտության և քաղաքագիտության ամբիոն	
042101.01.7	Իրավագիտություն
Հոգեբանության, սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի ամբիոն	
031301.01.7	Հոգեբանություն
092301.01.7	Սոցիալական աշխատանք
Մանկավարժության ամբիոն	
011301.01.7	Տարրական մանկավարժություն և մեթոդիկա
011102.04.7	Կրթության կազմակերպում
011301.03.7	Սոցիալական մանկավարժություն
011302.05.7	Հատուկ մանկավարժություն
011302.04.7	Լոգոպեդիա
Ֆիզիկական դաստիարակության տեսության և մեթոդիկայի ամբիոն	
011401.09.7	Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ
Ռազմական ամբիոն	
011401.16.7	Նախնական զինվորական պատրաստություն

ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

ՈՒԳԿԿ-ն Հասարակական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի Հոգեբանության, սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի ամբիոնի «Սոցիոլոգիա» մասնագիտության ուսանողների և դասախոսական կազմի հետ համատեղ անցկացրել է հետազոտություն ֆակուլտետում թողարկվող մասնագիտությունների և կրթական ծրագրերի արդյունավետության գնահատման նպատակով: Հետազոտությունն անցկացվել է երկու հարցաթերթով (մշակված «Սոցիոլոգիա» մասնագիտության առկա ուսուցման ուսանողուհիների կողմից): Հարցաթերթերից յուրաքանչյուրը պարունակում է տասնհինգական հարց՝ խառը տիպի հարցերով: Հարցումը կատարվել է Հասարակական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի դասախոսական կազմի և 2-րդ-4-րդ՝ առկա ուսուցման, հեռակա ուսուցման՝ 2-րդ-5-րդ կուրսերի ուսանողների շրջանում և՛ առցանց (google docs), և՛ առկա տարբերակներով: Հարցմանը մասնակցել են 62 դասախոս և 280 ուսանող: Վերլուծվել են 278 հարցվողի տվյալներ: Նախքան հարցումը սկսելը՝ իրականացվել է պիլոտային (փորձական) հարցում՝ 2 անգամ հարցաթերթը ստուգելու համար: Յուրաքանչյուր հարցման տևողությունը եղել է 7-8 րոպե, տեղեկատվության հավաքման տևողությունը ընդգրկել է 4 շաբաթ:

ՈՒԳԿԿ-ն, հիմքում ունենալով ԿԳՄՄՆ-ի կողմից դեռևս առաջարկվող ԿԱՅ-երը (կատարողականի արդյունքային ցուցանիշների (KPI)), մասնավորապես՝ ուսումնական գործընթացի հետ առնչվող, որոնց կիրառման ընթացքը հնարավորություն կտա ձևակերպելու ՇՊՀ-ի առաջնահերթություններն ընտրված ժամանակահատվածի համար և դրանք հարաբերակցելու միջավայրի առաջնահերթությունների հետ, ինչն ինքնին կարևոր և օգտակար գործընթաց է բուհի զարգացման հետագիծը հստակեցնելու տեսանկյունից: Ապրոբացիան/փորձարկումը մեկ ֆակուլտետի շրջանակում հնարավորություն է տալու հետագայում այն կիրառել ՇՊՀ-ի մյուս ֆակուլտետների, կրթական ծրագրերի առումով՝ հետագայում բարելավելով

հարցարանը: Ձեռք բերված արդյունքների ընթացիկ և հետագայում նաև շարունակական վերլուծության հիման վրա անհրաժեշտության դեպքում բարելավման պլանավորում է կատարվելու:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 1

Ըստ վերլուծության արդյունքների՝ հարցվողների մեծամասնությունը (69%) նշել է, որ ուսումնական պլանով նախատեսված դասընթացները շատ կարևոր են մասնագիտական ոլորտում, քանի որ ուղիղ կապ ունեն անձի և հասարակության հետ և նպաստում են ուսանողների՝ որպես իրավագիտակից քաղաքացիների ձևավորման գործընթացին: Վերլուծությունը ցույց տվեց, որ հարցվողների կեսից ավելին միջինից բարձր է գնահատել ֆակուլտետում սովորող ուսանողների մասնագիտական կոմպետենցիաները, և ընդհանուր հարցվողների մեծամասնությունը (72%) նշել է, որ ֆակուլտետում թողարկվող մասնագետները բավականաչափ մրցունակ են: Վերլուծությունը ցույց տվեց նաև, որ հարցվողների մեծամասնությունը (70%) ֆակուլտետում դասավանդվող առարկաները թողարկվող մասնագիտական կրթական ծրագրերի արդյունավետությանը հինգբալային համակարգով տվել է միջին գնահատական:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 2

Ըստ վերլուծության արդյունքների՝ հարցված ուսանողների մեծամասնությունը (65%) ֆակուլտետում թողարկվող մասնագիտական կրթական ծրագրերի արդյունավետությունը հինգբալային համակարգով գնահատել է միջինից բարձր: Հարցվողների զգալի մասի (67%) սպասելիքները՝ կապված մասնագիտության և առանձին առարկաների ուսուցանման հետ, արդարացված են: Հետազոտության արդյունքների վերլուծության ընթացքում առանձնացվել են հիմնական առաջարկները, որոնք ուղղված են ուսանողների մասնագիտական գիտելիքների և կոմպետենցիաների զարգացմանը, դրանք են՝

դասավանդման գործընթացի բարելավում և պրակտիկ փորձի ապահովում, գիտելիքի փոխանցում նորաձև և հետաքրքիր տարբերակով, ինչպես նաև ուսումնական ծրագրերի թարմացում:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԻՑ ԲԽՈՂ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

Հարցվողների մեծամասնության սպասելիքները՝ կապված մասնագիտության և առանձին առարկաների ուսուցանման հետ, լիովին արդարացվել են: Հետազոտության արդյունքների վերլուծության ընթացքում առանձնացվել են հիմնական առաջարկները, որոնք ուղղված են ուսանողների մասնագիտական գիտելիքների և կոմպետենցիաների զարգացմանը: Դրանք են՝

- տարբեր սեմինարների ու վեբինարների կազմակերպում և անցկացում,
- պրակտիկայի համար լայն հնարավորությունների ստեղծում:

Նախքան հետազոտությունը սկսելը՝ առաջ էին քաշվել հետևյալ վարկածները.

1. Ենթադրվում է, որ Հասարակական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի դասախոսական կազմը բարձր է գնահատում մասնագիտական կրթական ծրագրերի արդյունավետությունը ֆակուլտետում:

2. Ենթադրվում է, որ Հասարակական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի 2-րդ-4-րդ կուրսերի ուսանողները բարձր են գնահատում մասնագիտական կրթական ծրագրերի արդյունավետությունը ֆակուլտետում:

1-ին վարկածը վերլուծությունից հետո հերքվեց: Վերլուծությունը ցույց տվեց, որ Հասարակական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի դասախոսական կազմը միջին գնահատական է տալիս մասնագիտական կրթական ծրագրերի արդյունավետությանը ֆակուլտետում: **2-րդ վարկածը** վերլուծությունից հետո մասամբ հաստատվեց: Վերլուծությունը ցույց տվեց, որ Հասարակական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի 2-րդ-4-րդ կուրսերի ուսանողները (առկա ուսուցման)

միջինից բարձր են գնահատում մասնագիտական կրթական ծրագրերի արդյունավետությունը ֆակուլտետում, իսկ ֆակուլտետի հեռակա ուսուցման 2-րդ-5-րդ կուրսերի ուսանողները բարձր են գնահատում մասնագիտական կրթական ծրագրերի արդյունավետությունը ֆակուլտետում:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ ՄԻՏՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Կենտրոնը հաշվետու ժամանակահատվածում իրականացրել է իր հիմնական գործառույթները, որոնք են՝ ուսումնական գործընթացի նպատակաուղղված պլանավորման, կազմակերպման համակարգումը, գործընթացին մասնակից ստորաբաժանումների աշխատանքների կառավարումը և վերահսկումը.


- Բակալավրի (առկա/հեռակա) և մագիստրատուրայի ՄԿԾ-ների մասնագրերի, ուսումնական պլանների ու առարկայական նկարագրերի լրամշակման գործընթացի կազմակերպում, վերահսկում: Հաշվետու շրջանում ՄԿԾ-ների բարելավման գործընթացի կազմակերպումն ունեցել է դրվագային և ըստ անհրաժեշտության իրականացման բնույթ՝ նախապատրաստելով, քննարկելով այն հիմնական սկզբունքները, որոնք ուղենշային էին 2021-2022 ուստարվա ավարտին ՄԿԾ-ների բարելավման գործընթացի համակարգային կազմակերպման դիտանկյունից:
- Հաշվետու տարում մասնագիտական ամբիոնների հետ աշխատանքների արդյունքում 2021-2022 ուստարվա ավարտին Կենտրոնը կազմել է ՇՊՀ-ի կողմից թողարկվող կրթական ծրագրերի բարելավման պլան, որի հիմքում ունի ներքին և արտաքին շահառուների ընդհանուր և մասնավոր բնույթ, հատուկ կարծիքի կարգավիճակ ունեցող դիտարկումները:
- Բարելավման փուլում են գտնվում մի շարք ներքին իրավական ակտեր, որոնք հնարավորություն են ընձեռելու ոչ միայն կրթական ծրագրերի մշակման, բարելավման, մշտադիտարկման գործընթացները դարձնել առավել արդյունավետ, այլև

ապահովել դրանց իրականացման որակը: Ընդ որում, նշենք, որ հաշվետու ուստարում աշխատանքներ են իրականացվել մասնագիտական կրթական ծրագրերի բարելավման նպատակների և խնդիրների հստակեցման ուղղությամբ, որոնք հիմնված են եղել բուհի ինքնավերլուծության, արտաքին փորձագիտական գնահատումների վրա:

- Անդրադարձ կատարելով «Ուսանողների ակադեմիական տվյալների էլեկտրոնային բազայի» աշխատանքներին՝ պիտի նշել, որ նախատեսվում է հակակոռուպցիոն կարևոր նշանակություն ունեցող այս գործիքը կատարելագործել, լավարկել՝ կիրառելով այս ծրագրի ընձեռած հնարավորությունները: Ընդլայնված հնարավորություններով գործող «Ուսանողների ակադեմիական տվյալների էլեկտրոնային բազայի» գործարկումն ապահովելու է ոչ միայն ուսանողական համակազմի վերաբերյալ տվյալների մշակում, այլև ՊԴ կազմի, նաև ուսումնական պլանների, ամբիոնների ուսումնական ծանրաբեռվածության: Այս գործողությունները քանիցս կբարելավեն ուսումնական գործընթացի կազմակերպման ու վերահսկման գործընթացը:
- Կենտրոնն իրականացրել է նաև իր գործառույթներից բխող ամենամյա գործողություններ, որոնք են՝ մասնագիտական ամբիոնների ուսումնական բեռնվածությունների կազմումը, ստուգումը, կատարման վերահսկումը, ժամավճարային հիմունքներով աշխատողների կատարողականների ստուգումը, ինչպես նաև բակալավրի (առկա/հեռակա) և մագիստրատուրայի ուսուցման դասատախտակների ստուգումը և լսարանային ֆոնդով ուսումնական գործընթացի իրականացման ապահովումը, առկա և հեռակա ուսուցման գործընթացի կայացման վերահսկումը, դասամատյանների վարումը:
- Կենտրոնն իրականացրել է ուսանողների ավարտական փաստաթղթերի նախապատրաստումը և հաշվառումը, ավարտական, ամփոփիչ և քննական հանձնաժողովների աշխատանքների կազմակերպումը, ՇՊՀ-ի գիտական խորհրդին ներկայացրել է ամփոփիչ ատեստավորման արդյունքները՝ մասնագիտական ամբիոններում և ֆակուլտետային

ընդլայնված նիստերում քննարկելով առաջացած խնդիրները, հանձնաժողովների նախագահների առաջարկություններն ու դիտարկումները: Նշենք, որ 2021-2022 ուստարվա ամփոփիչ ատեստավորման մասնակցելու թույլտվություն է տրվել 517 ուսանողի, որոնցից ատեստավորման պահանջները հաղթահարել են 511-ը, 6 ուսանող գնահատվել են «անբավարար», որոնցից 2-ը «Նախնական զինվորական պատրաստություն» մասնագիտության բակալավրի հեռակա ուսուցման համակարգի ուսանողներ են, 3-ը՝ «Անզլերեն լեզու և գրականություն» մասնագիտության բակալավրի առկա (2 ուսանող) և հեռակա (1 ուսանող) համակարգի և 1-ը՝ «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» մասնագիտության մագիստրատուրայի համակարգի: Ուսանողական համակազմից գերազանցության դիպլոմ ստացած ուսանողների թիվը բակալավրի առկա համակարգի կրթական ծրագրով սովորողների մոտ կազմել է 37, հեռակա՝ 7, իսկ մագիստրատուրայում՝ 137 ուսանող:

	Ընդամենը դիպլոմ	Գերազանցության դիպլոմ	%
Առկա բակալավրիատ	116	37	31,9
Հեռակա բակալավրիատ	181	7	3,87
Մագիստրատուրա	214	137	64,02
Ընդամենը	511	181	35,42



Հաշվետու ժամանակահատվածում ըստ անհրաժեշտության մասնագիտական ամբիոնների հետ քննարկվել են ավարտական աշխատանքների թեմաները՝ ելակետ ունենալով ՄԿԾ-ների վերջնարդյունքները, և հաստատման են ներկայացվել բակալավրի կրթական ծրագրի առկա ուսուցման համակարգի 4-րդ կուրսերի թվով 110 և հեռակա ուսուցման համակարգի 5-րդ կուրսերի թվով 159 ուսանողների ավարտական աշխատանքների թեմաներ: Ինչպես նաև քննարկվել և հաստատման են ներկայացվել մագիստրոսական թեզերի թեմաները մագիստրոսի կրթական ծրագրի առկա ուսուցման համակարգի 1-ին կուրսերի թվով 209 ուսանողների համար: 2021-2022 ուստարվա ընթացքում, ըստ գործող կարգի, կատարվել են թվով 14 թեմայի մասնակի վերաձևակերպումներ և ինը ղեկավարների փոփոխություններ:

➤ Հաշվետու տարում Կենտրոնն իրականացրել է ուսումնական պլաններով նախատեսված մանկավարժական, ուսումնական, արտադրական և այլ պրակտիկաների կազմակերպում, վերահսկում, արդյունքների ամփոփում և պրակտիկայի վայրերի վճարման գործընթացի կազմակերպման փաստաթղթային ապահովում: Պրակտիկաներն իրականացնելու համար ներկայումս ՇՊՀ-ն ունի 100-ից ավելի գործող պայմանագրեր, որոնք կնքված են պետական և ոչ պետական տարբեր կազմակերպությունների, հիմնարկ-ձեռնարկությունների և նրանց ստորաբաժանումների հետ, ինչպես օրինակ՝ Գյումրու համայնքապետարան, ՀՀ Կադաստրի կոմիտե, ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոն, Գյումրու Երիտասարդական պալատ, «Լենտեքս» ՍՊԸ, «ՀՀ ազգային արխիվ» ՊՈԱԿ, «Ալֆա-Ֆարմ» ՓԲԸ, «Ա.Դ. Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն» ՀԿ, ՀՀ ԳԱԱ Ա. Նազարովի անվան երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտ, «Շիրակի մարզային գրադարան» ՊՈԱԿ, «Շիրակի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» ՊՈԱԿ, «Գյումրիի տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն» ԳԿՀ, «Բեռլին հյուրերի տուն» ՍՊԸ, «Գրանդ Հոթել Ապրիկոտ» ՍՊԸ, Գյումրու «Թոմուս» հյուրանոց, «Արաքս-95» ՍՊԸ, Հայկական Կարմիր խաչի ընկերություն, «Աննանիկա» ՍՊԸ, «Ռ. Զաքարյան» ՍՊԸ, «Հ. Շիրազի հուշատուն-թանգարան» ՀՈԱԿ, «Մ. Մկրտչյանի տուն-թանգարան» ՀՈԱԿ, «Ավ. Իսահակյանի տուն-թանգարան» ՀՈԱԿ, «Նոր Լույս» Մենթորինգ Կենտրոն երիտասարդների համար» ՀԿ, «Պետրոս Մուրադյան» ԱԶ (TCO ուսումնական կենտրոն), «Լևոն Եղիկյան» ԱԶ, «Աստղիկ Եղիգարյան» ԱԶ («Աստեր» մանկական զարգացման կենտրոն), «Կառլեն Իսահակյան» ԱԶ (Կրեատիվ մշակութային տուր), «ՇԵԼԲԻ» ՍՊԸ, «Լիլիթ Պետրոսյան» ԱԶ (ղեղատուն), «Եպրաքսյա Մեխակյան» ԱԶ («Շրջապատ» շաբաթաթերթ), Գյումրու թիվ 3 արհեստագործական ուսումնարան, «Հայրապետյան» ՍՊԸ-ը (Փաստաբանական գործունեության արտոնագիր N 1040), «Հայկ Հարությունի Հարությունյան» ԱԶ-ը (Փաստաբանական գործունեության արտոնագիր N 1209), «Ալբերտ Վանիկի Դերձակյան» ԱԶ (Փաստաբանական գործունեության արտոնագիր N 1950),

«Արաքս Կենտրոն» բարեգործական ՀԿ, «Արևամանուկ» հոգեբանասոցիալական աջակցության հիմնադրամ և այլն: Պրակտիկայի վայրերից են 12 հիմնական, 6 ավագ, 2 միջնակարգ դպրոցներ և 3 վարժարան, 2 միջին մասնագիտական ուսումնական հաստատություն, 7 նախակրթարան: Վերջին տարիներին ընդլայնվել է պրակտիկայի անցկացման աշխարհագրությունը՝ ընդգրկելով բանկեր, դեղատներ, թանգարաններ, հյուրանոցներ, արտադրամասեր, զբոսաշրջային գործակալություններ, ԶԼՄ խմբագրություններ, խնամքի, զարգացման, հոգեբանական և սոցիալական աջակցության կենտրոններ, իրավաբանական ընկերություններ, տեղեկատվական, սոցիոլոգիական, ինժեներական, հետազոտական կենտրոններ, գրադարան, արխիվ, ֆինանսական գործունեության ուսումնասիրման կենտրոններ և այլն:

Պրակտիկաների իրականացման ընթացքում Կենտրոնի կողմից ոչ միայն վերահսկողություն, այլև համապատասխան նախապատրաստական աշխատանքներ և մշտական խորհրդատվություն է իրականացվել:

2021-2022 ուսումնական տարվա 1-ին կիսամյակում ուսումնական պլաններով նախատեսված ուսումնական, արտադրական և մանկավարժական պրակտիկաներ են իրականացվել բակալավրի կրթական ծրագրի առկա ուսուցման համակարգի 4-րդ կուրսերի թվով 112 ուսանողների համար 2021թ.-ի նոյեմբերի 15-ից մինչև դեկտեմբերի 17-ը:

Կազմակերպվել և վերահսկվել են նաև գիտամանկավարժական և գիտահետազոտական պրակտիկաները 2021թ.-ի նոյեմբերի 15-ից մինչև դեկտեմբերի 10-ը մագիստրոսի կրթական ծրագրի 2-րդ կուրսերի թվով 219 ուսանողների համար: 1-ին կիսամյակում կազմակերպվել է նաև ուսումնական պրակտիկա «Սոցիալական աշխատանք» բակալավրի կրթական ծրագրի առկա ուսուցման 3-րդ և 4-րդ կուրսերի թվով 14 ուսանողների համար 2021թ.-ի հոկտեմբերի 6-ից մինչև դեկտեմբերի 22-ը (շաբաթական 1 օր):

2021-2022 ուսումնական տարվա 1-ին կիսամյակում ուսումնական պլաններին համապատասխան՝ ուսումնական, արտադրական և մանկավարժական պրակտիկաներ են կազմակերպվել բակալավրի կրթական ծրագրի հեռակա

ուսուցման համակարգի 5-րդ կուրսերի թվով 186 ուսանողների համար 2022թ. փետրվարի 1-ից մինչև մարտի 7-ը և «Սոցիալական աշխատանք» մասնագիտության 4-րդ կուրսի թվով 15 ուսանողների համար 2022թ.-ի փետրվարի 1-ից մինչև փետրվարի 28-ը: Հաշվետու ուսումնական տարվա 1-ին կիսամյակում Կենտրոնի կողմից թվով 546 ուսանողների համար կազմակերպվել են ուսումնական, արտադրական և մանկավարժական պրակտիկաներ:

2021-2022 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում պրակտիկաներ են կազմակերպվել բակալավրի կրթական ծրագրի հեռակա ուսուցման համակարգի 4-րդ կուրսերի թվով 148, ինչպես նաև «Սոցիալական աշխատանք» մասնագիտության 3-րդ կուրսի թվով 25 ուսանողների համար 2022թ.-ի մարտի 1-ից մինչև ապրիլի 1-ը:

2021-2022 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում կազմակերպվել է նաև գիտահետազոտական պրակտիկա (թեզի շրջանակում) մագիստրոսի կրթական ծրագրի 2-րդ կուրսերի՝ թվով 219 ուսանողների համար 2021թ.-ի փետրվարի 7-ից մինչև փետրվարի 25-ը ՇՊՀ-ի մասնագիտական ամբիոններում և «Դասավանդի՛ր, Հայաստան» ծրագրի 7 ուսումնառողների աշխատավայրերում:

2021-2022 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում իրականացվել է նաև մանկավարժական, արտադրական, ուսումնական պրակտիկա բակալավրի առկա ուսուցման համակարգի 3-րդ կուրսերի թվով 230 ուսանողների համար 2022թ. ապրիլի 1-ից մինչև ապրիլի 29-ը, ուսումնական պրակտիկա՝ «Սոցիալական աշխատանք» 2-րդ, 3-րդ և «Լրագրություն» 2-րդ կուրսերի թվով 22 ուսանողների համար 2022թ. փետրվարի 11-ից մինչև մայիսի 27-ը շաբաթական 1 օր:

2021-2022 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում կազմակերպվել է նաև պլեներային պրակտիկա «Դեկորատիվ կիրառական արվեստ» և «Համակարգչային գրաֆիկա» բակալավրի կրթական ծրագրերի առկա ուսուցման համակարգի թվով 23 ուսանողների համար Շիրակի և Լոռու մարզերի տեսարժան վայրերում 2022թ. հունիսի 21-ից 23-ը:

Հաշվետու ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում Կենտրոնի կողմից կազմակերպվել են պրակտիկաներ թվով 437 ուսանողների համար:

2021-2022 ուստարում Կենտրոնի կողմից պլանավորվել, կազմակերպվել և ամփոփվել է ընդհանուր թվով 1213 ուսանողների պրակտիկա:



- Կենտրոնի համար կարևոր է նաև համագործակցությունը «Դասավանդի՛ր, Հայաստան» ծրագրի հետ: Հաշվետու տարում «Դասավանդի՛ր, Հայաստան» ծրագրի մասնակից ուսանողների թիվը կազմում է 17 ուսանող առաջին կուրսում և 7 ուսանող՝ երկրորդ կուրսում: Ծրագրի 24 մասնակից ուսանողների համար ապահովվել է մշտական կապ ծրագրերը թողարկող և սպասարկող ամբիոնների, դասավանդող դասախոսների հետ:

2021-2022 ՈՒՍԱՐՈՒՄ «ԴԱՍԱՎԱՆԻ՛Ր, ՀԱՅԱՍՏԱՆ»

ԾՐԱԳՐՈՎ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՒՄ

	Մասնագիտություն	Կուրս	Ուսանողների թվաքանակ	«Դասավանդի՛ր, Հայաստան» ծրագրով ուսանողների թվաքանակ
1	Մաթեմատիկա	1	10	5
2	Պատմություն	1	13	6
3	Ռուսաց լեզու և գրականություն	1	5	2
4	Հայոց լեզու և գրականություն	1	8	2
5	Կենսաբանություն	1	7	1
6	ՆԶՊ	1	4	1
7	Պատմություն	2	11	4
8	Ռուսաց լեզու և գրականություն	2	5	1

9	Մաթեմատիկա	2	11	2
---	------------	---	----	---



- Կենտրոնն իրականացրել է վերահսկում բակալավրի (առկա) և մագիստրատուրայի անվճար-վճարովի համակարգերում ուսանողների փոխատեղման /ռոտացիա/՝ առաջնորդվելով գործող կարգերով: Ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի մասնակի փոխհատուցումը իրականացվել է ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցների և ՇՊՀ-ի

Ֆինանսական միջոցների հաշվին: Առաջադիմության արդյունքներով պետական կրթաթոշակ է տրվել բակալավրիատի և մագիստրատուրայի մոտ 311 ուսանողների:

- Հաշվետու շրջանում հաջողությամբ կազմակերպվել են նաև ուսանողական շարժի հաշվարկման և վերահսկման աշխատանքները: Պատրաստվել են ՀՀ զինված ուժերում ծառայելու, ազատման, տեղափոխման, վերականգնման, արտերկիր գործուղման, տարբեր պատճառով տարկետման, ինչպես նաև ուսումնական գործընթացին առնչվող այլ հրամանների նախագծեր: Հաշվետու ժամանակահատվածում բուհից հեռացված, ազատված ուսանողների ընդհանուր թվաքանակը 148 է, իսկ վերականգնվածներինը՝ 32: Հեռացումների հիմնական պատճառները մնում են ակադեմիական պարտքերը և ուսանողների արտերկիր մեկնելու հանգամանքը: ՀՀ զինված ուժերում ծառայելու մեկնել են 64 ուսանողներ, վերադարձել՝ 58: Տեղադափոխության ենթարկվել են 37 ուսանողներ:
- Կենտրոնի կողմից պատշաճ մակարդակով կազմակերպվել է նաև միջին մասնագիտական հաստատությունների բարձր առաջադիմություն ցուցաբերած շրջանավարտների 2021-2022 ուսումնական տարում ՇՊՀ-ում կրթությունը շարունակելու գործընթացը 28 դիմորդների համար, որոնցից համապատասխան մասնագիտություններով հրամանագրվել է 19 ուսանող: Կազմակերպվել է նաև նախորդ ուսումնական տարվա(ների) ամփոփիչ ատեստավորման քննություններին չներկայացած կամ անբավարար գնահատված ուսանողների կցագրման (թվով 6 ուսանող) և ամփոփիչ ատեստավորման մասնակցության թույլտվության հրամանագրման (թվով 5 ուսանող) գործընթացը:
- Ընդհանուր առմամբ, վերջին տարիներին դիտարկվում է գերազանցության դիպլոմների թվաքանակի աճ, որը մագիստրատուրայում, թերևս, պայմանավորված է դիպլոմների շնորհման կարգի մեջ իրականացված փոփոխությամբ, համաձայն որի՝ 90 և բարձր ՄՈԳ ունեցող ուսանողին շնորհվում է գերազանցության դիպլոմ՝ ի տարբերություն նախորդ կարգի, որը սահմանում էր 95 և բարձր ՄՈԳ: Չնայած այս փաստարկի, այնուամենայնիվ, ինդիք կա այս առումով, որի

հաղթահարման համար Կենտրոնը առաջարկելու է իրականացնել մնացորդային գիտելիքի ստուգում: Ստորև ներկայացնում ենք գերազանցության դիպլոմներ ստացած ուսանողների թվաքանակն ըստ բակալավրի և մագիստրոսի ԿԾ-երի 2019-2020, 2020-2021, 2021-2022 ուստարիների համեմատությամբ:

**ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹՅԱՆ ԴԻՊԼՈՄ ՍՏԱՑԱԾ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿ
ԲԱԿԱԼԱՎՐԻ ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ**

N	Մասնագիտություն	2019-2020 ուստարի	2020-2021 ուստարի	2021-2022 ուստարի
1	Մաթեմատիկա	1	2	2
2	Ֆիզիկա	2	0	0
3	Ինֆորմ. և կիր. մաթեմատիկա	2	0	1
4	Կառավարում	3	6	3
5	Տեղեկատվական տեխնոլոգիաներ	0	2	0
6	Հաշվապահական հաշվառում և հարկում	0	2	0
7	Աշխարհագրություն	3	1	0
8	Կենսաբանություն	2	2	0
9	Դեղագործական քիմիա	1	0	0
10	Քարտեզ. և կադաստրային գործ	1	2	1
11	Շուկայագիտություն	0	4	0
12	Հայոց լեզու և գրականություն	4	1	3
13	Անգլերեն լեզու և գրականություն	4	5	1
14	Ռուսաց լեզու և	2	1	2

«ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ


ՈՒԳԿԿԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ – 2023

	գրականություն			
15	Թարգմանչ. գործ՝ անգլերեն և ռուսերեն	1	1	0
16	Թարգմանչ. գործ՝ անգլերեն և հայերեն	2	3	2
17	Միջմշակույթ. հաղորդ.՝ ֆրանս. և հայերեն	0	1	0
18	Դեկորատիվ կիրառական արվեստ	0	5	0
19	Համակարգչային գրաֆիկա	0	1	0
20	Մերվիս	2	1	0
21	Պատմություն	4	7	1
22	Հասարակագիտություն	2	0	0
23	Հոգեբանություն	4	6	6
24	Սոցիալական աշխատանք	2	3	3
25	Սոցիոլոգիա	0	6	6
26	Տարրական մանկ. և մեթոդիկա	4	5	3
27	Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ	0	0	1
28	Նախնական զինվ. պատրաստություն	2	7	2
Ընդամենը		48	74	37



ԲԱԿԱԼԱՎՐԻ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

N	Մասնագիտություն	2019-2020 ուստարի	2020-2021 ուստարի	2021-2022 ուստարի
1	Մոցիալական մանկավարժություն	1	2	0
2	Մոցիալական աշխատանք	0	1	2
3	Հայոց լեզու և գրականություն	0	0	3
4	Կերպարվեստ	0	0	1
5	Հոգեբանություն	0	0	1
Ընդամենը		1	3	7



ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

N	Մասնագիտություն	2019-2020 ուստարի	2020-2021 ուստարի	2021-2022 ուստարի
1	Մաթեմատիկա	2	5	5
2	Ֆիզիկա	0	2	0
3	Ինֆորմ. և կիր. մաթեմատիկա	1	2	5
4	Կառավարում	3	4	5
5	Աշխարհագրություն	2	3	0
6	Կենսաբանություն	3	4	3
7	Կենսատեխնոլոգիա	0	0	4
8	Հայոց լեզու և գրականություն	3	4	3
9	Անգլերեն լեզու և գրականություն	7	7	3
10	Ռուսաց լեզու և գրականություն	1	3	2
11	Դեկորատիվ կիրառական արվեստ	2	2	1
12	Կայուն զբոսաշրջություն	3	0	9
13	Պատմություն	6	6	5
14	Իրավագիտություն	0	15	12
15	Հոգեբանություն	6	11	12
16	Սոցիալական աշխատանք	1	15	8
17	Տարրական մանկ. և մեթոդիկա	10	6	9
18	Կրթության կազմակերպում	6	12	13
19	Սոցիալական մանկավարժություն	4	5	4
20	Հատուկ մանկավարժություն	0	0	15
21	Լոգոպեդիա	0	0	14

«ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՈՒԳԿԿԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ – 2023

22	Ֆիզիկական դաստ. և սպորտ. մարզումներ	0	1	2
23	Նախնական զինվ. պատրաստություն	3	5	3
Ընդամենը		63	112	137



Հետաքրքիր է դիտարկել նաև վերջին հինգ տարիների համեմատական պատկերը ստորև ներկայացված աղյուսակներով և գծապատկերներով.

ԲԱԿԱԼԱՎՐԻ ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Մասնագիտություն	2017-2018 ուստարի			2018-2019 ուստարի			2019-2020 ուստարի			2020-2021 ուստարի			2021-2022 ուստարի		
	Տալ դիպլոմ	Գերազանց. դիպլոմ	Ոչ գերազանց. դիպլոմ	Տալ դիպլոմ	Գերազանց. դիպլոմ	Ոչ գերազանց. դիպլոմ	Տալ դիպլոմ	Գերազանց. դիպլոմ	Ոչ գերազանց. դիպլոմ	Տալ դիպլոմ	Գերազանց. դիպլոմ	Ոչ գերազանց. դիպլոմ	Տալ դիպլոմ	Գերազանց. դիպլոմ	Ոչ գերազանց. դիպլոմ
1 Մաթեմատիկա	4	2	2	5	3	2	2	1	1	5	2	3	3	2	1
2 Ֆիզիկա	3	1	2	3	-	3	3	2	1	2	0	2	0	0	0
3 Ինֆորմատիկա և կիրառ. մաթեմատիկա	7	-	7	8	3	5	12	2	10	10	0	10	6	1	5
4 Կառավարում	6	1	5	3	-	3	9	3	6	11	6	5	6	3	3
5 Տեղեկատվական տեխնոլոգիաներ	-	-	-	-	-	-	3	-	3	8	2	6	0	0	0
6 Հաշվապահական հաշվ. և հարկում	-	-	-	-	-	-	-	-	-	5	2	3	0	0	0
7 Աշխարհագրություն	6	-	6	3	-	3	3	3	0	4	1	3	3	0	3
8 Կենսաբանություն	11	1	10	10	1	9	11	2	9	6	2	4	3	0	3
9 Դեղագործական քիմիա	9	-	9	13	2	11	6	1	5	8	0	8	0	0	0
10 Քիմիա	-	-	-	1	-	1	-	-	-	-	-	-	-	-	-

«ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ


ՈՒԳԿԿԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ – 2023

11	Քարտեզագրություն և կադաստրային գործ	4	-	4	3	-	3	5	1	4	4	2	2	6	1	5
12	Շուկայագիտություն	-	-	-	-	-	-	-	-	-	4	4	0	0	0	0
13	Հայոց լեզու և գրականություն	12	2	10	18	2	16	9	4	5	18	1	17	6	3	3
14	Լրագրություն	3	1	2	3	1	2	3	-	3	4	0	4	3	0	3
15	Անգլերեն լեզու և գրականություն	20	5	15	34	13	21	20	4	16	28	5	23	4	1	3
16	Ռուսաց լեզու և գրականություն	7	2	5	11	2	9	10	2	8	3	1	2	5	2	3
17	Ֆրանսերեն լեզու և գրականություն	2	-	2	3	-	3	1	-	1	-	-	-	-	-	-
18	Գերմաներեն լեզու և գրականություն	-	-	-	1	1	-	-	-	-	-	-	-	-	-	-
19	Միջմշ. հաղորդ.՝ ֆրանս. և հայերեն	-	-	-	-	-	-	-	-	-	5	1	4	-	-	-
20	Թարգմանչական գործ՝ անգլ. և ռուսերեն	5	-	5	3	-	3	11	1	10	16	1	15	0	0	0
21	Թարգմանչական գործ՝ անգլ. և հայերեն	4	-	4	4	-	4	15	2	13	16	3	13	9	2	7
22	Կիրառական արվեստ/Կերպարվեստ և գծ.	8	2	6	14	3	11	-	-	-	-	-	-	-	-	-
23	Դեկորատիվ կիր. արվեստ	-	-	-	-	-	-	4	-	4	8	5	3	4	0	4
24	Դիզայն	-	-	-	-	-	-	-	-	-	4	0	4	0	0	0
25	Համակարգչային գրաֆիկա	-	-	-	-	-	-	-	-	-	5	1	4	1	0	1
26	Սերվիս	5	-	5	4	1	3	9	2	7	12	1	11	0	0	0

«ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՈՒԳԿԿԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ – 2023

27	Պատմություն	18	2	16	12	2	10	14	4	10	14	7	7	3	1	2
28	Քաղաքագիտություն	-	-	-	-	-	-	-	-	-	2	0	2	0	0	0
29	Իրավագիտություն	6	-	6	20	5	15	-	-	-	-	-	-	-	-	-
30	Հասարակագիտություն	-	-	-	-	-	-	7	2	5	-	-	-	-	-	-
31	Հոգեբանություն/Մանկ. և հոգեբ.	6	-	6	12	4	8	8	4	4	7	6	1	10	6	4
32	Սոցիալական աշխատանք	3	1	2	22	5	17	22	2	20	5	3	2	7	3	4
33	Սոցիոլոգիա	-	-	-	-	-	-	-	-	-	16	6	10	6	6	0
34	Տարբ. մանկ. և մեթոդիկա /Մանկավարժություն և մեթոդիկա /տարբ. կրթության/	39	1	38	34	2	32	27	4	23	32	5	27	15	3	12
35	Մանկ. և հոգեբ. (նախադպրոցական)/ Նախադպր. մանկ. և հոգեբ.	1	-	1	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
